ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 04 » մարտի 2019 թ. N 38

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ներկայացնում ենք Անտառաշեն համայնքի ղեկավարի թիվ 1 – 5 որոշումները :

Առդիր՝ 1 ֆայլ :

Համայնքի ղեկավար՝ Ռ. Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1

ՀՀ ԼՄ ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2019 Թ-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թ-ի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաաստատել Անտառաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2019 թ-ի ամենամսյա արձակուրդների տրամադրման հերթականությունը /նախնական գրաֆիկը/.

Խառատյան Ռաֆիկ՝ համայնքի ղեկավար – հունիս

Հարությունյան Քրիստինե՝ ղեկավարի օգնական – օգոստոս

Քոչարյան Քրիստինե՝ առաջատար մասնագետ-հաշվապահ – սեպտեմբեր

Բոլոտին Սերգեյ՝ վարորդ - հոկտեմբեր

2.Սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի վերոհիշյան աշխատակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 2

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-026-0006-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշոտ Ղումաշյանին, Սամվել Ղումաշյանին և Սվետլանա Ղումաշյանին պատկանող 06-043-0006-0002 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /բնակելի տուն/ տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Անտառաշեն համայնք, 1 փողոց, թիվ 11 :

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 23.01.2019թ. թիվ 01/107.4/00372-2019 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել "Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների" պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

3.Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Անտառաշեն համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2019 թվականի N 4 -Ն

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն "ՀՀ բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Անտառաշեն համայնքի ավագանու 25/02/2019 թ-ի թիվ 3-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել համայնքի 2019 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.ԽԱՌԱՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2019 թվականի N 5

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անտառաշեն համայնքի վարչական տարածքում Լյովա Գեվորգի Գյուլբեկյանի սեփականություն հանդիսացող 06-026-0013-0004 ծածկագրով 0,03062 հա մակերեսով գույքը տարանջատել առանձին միավորների՝ 0,01803հա և 0,01259հա, համաձայն Որակավորված անձ Գ.Վեքիլյանի /վկայական 006/ կողմից հաստատված հատակագծի:

2. 06-026-0013-0004 ծածկագրի գույքին տրամադրել Անտառաշեն համայնք 1 փողոց թիվ 71 փոստային հասցեն:

3.Դիմել ՀՀ ԱԳԿՊԿ-ի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայականներ տրամադրելու համար.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խաչատյան